ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2014թ. նոյեմբերի 26 թիվ 121 -Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ
ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով և հիմք ընդունելով <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի գործադիր վարչության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 2-500 գրությունը՝ ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծախսերով հատկացված միջոցներից՝ <<Աշխատավարձի և նրան հավասարեցված այլ վճարներ>> հոդվածից 400000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ փոխանցել <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի 103003215672 հաշվեհամարին:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ